ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N2583 - Ա **14 ապրիլի 2009թ.**

ՔԱՆԱՔԵՌԻ 12-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԱՆՑՈՒՂՈՒ Հ. 6/2 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՄԵՆ ԳՐԻՇԱՅԻ ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆԻ, ՆԱՐԻՆԵ ԳՐԻՇԱՅԻ ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆԻ, ԱՐԵՎՀԱՏ ԱՍՔԱՆԱԶԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ, ՖԵՐԴԻՆԱՆՏ ԱՎԵՏԻՔԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ, ԱՆՅԱ ԱՎԵՏԻԿԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Արմեն Գրիշայի Ղարաքեշիշյանի (ծնված 04.05.1968թ.), Նարինե Գրիշայի Ղարաքեշիշյանի (ծնված 19.03.1974թ.), Արևհատ Ասքանազի Գրիգորյանի (ծնված 05.12.1936թ.), Ֆերդինանտ Ավետիքի Ալեքսանյանի (ծնված 20.12.1949թ.), Անյա Ավետիկի Ալեքսանյանի (ծնված 08.07.1954թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Քանաքեռի 12-րդ փողոցի անցուղու հ.6/2 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 453.35քմ, որից 271քմ մակերեսով հողամասը Արմեն Գրիշայի Ղարաքեշիշյանին, Նարինե Գրիշայի Ղարաքեշիշյանին, Արևհատ Ասքանազի Գրիգորյանին, Ֆերդինանտ Ավետիքի Ալեքսանյանին, Անյա Ավետիկի Ալեքսանյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է: Օրինական հողամասին կից օգտագործվող 182.35քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, 17.08.2004թ., 10.07.2003թ. ժառանգության իրավունքի վկայագրերը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ջեյթուն տարածքային ստորաբաժանման 05.02.2009թ. հ.215ա, Երևանի քաղաքապետարանի <<Հողի և ունեցվածքի գործառնություններ>> ՊՓԲԸ-ի 20.03.2009թ. հ.20/2-Ե/143 գրությունները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 13.03.2009թ. հ.20-Ել-1778 եզրակացությունը, համաձայն որի Քանաքեռի 12-րդ փողոցի անցուղու հ.6/2 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Քանաքեռի 12-րդ փողոցի անցուղու հ.6/2 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Արմեն Գրիշայի Ղարաքեշիշյանի, Նարինե Գրիշայի Ղարաքեշիշյանի, Արևհատ Ասքանազի Գրիգորյանի, Ֆերդինանտ Ավետիքի Ալեքսանյանի, Անյա Ավետիկի Ալեքսանյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 271քմ մակերեսով հողամասին կից 182.35քմ մակերեսով հողամասի չափով (որից 37.5քմ մակերեսով հողամասն ընդհանուր համատեղ սեփականություն է Ֆեդյա Խաչատրյանի հետ)՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 182.35քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Զեյթուն տարածքային ստորաբաժանման կողմից:

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով:

4. Զաքյան փողոցի հ.6 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ <<Քանաքեռի 12-րդ փողոցի անցուղու հ.6/2 տուն>>:

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Զեյթուն տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Արմեն Գրիշայի Ղարաքեշիշյանի, Նարինե Գրիշայի Ղարաքեշիշյանի, Արևհատ Ասքանազի Գրիգորյանի, Ֆերդինանտ Ավետիքի Ալեքսանյանի, Անյա Ավետիկի Ալեքսանյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները:

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Քանաքեռ-Զեյթուն թաղապետարան:

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ**